ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

15 մայիսի 2026թ. կնքված N ՀԱՊՀ-ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-3 պայմանագրի

ք. Երևան «15» հունիսի 2026թ.

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան հիմնադրամն, ի դեմս ռեկտոր Գ.Վարդանյանի, (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Ամուր թիկունք ՍՊԸ»-ն, ի դեմս տնօրեն Վ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 2026թ-ի մայիսի 15-ին կնքված N ՀԱՊՀ-ԳՄ-ԷԱՃԱՊՁԲ-26/2-3 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը և պատասխանատու ստորաբաժանման 2026 թվականի հունիսի 3-ի թիվ Ն//1515-26 ծառայողական գրությունը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի հավելված 2-ով՝ մատակարարման ժամկետը երկարաձգել 20 օրացուցային օրով, սահմանելով մինչև 06.07.2026թ:

1.2 Մատակարարված ապրանքի դիմաց վճարումն իրականացնել հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելուց հետո 5 բանկային օրվա ընթացքում:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական
համալսարան հիմնադրամ
Հասցեն՝ ք. Երևան, Տերյան 105
Բանկը՝ «ԱՄԻՕԲԱՆԿ» ՓԲԸ
Գյումրի մասնաճյուղ
Հ/Հ՝ 1150001469160100
ՀՎՀՀ 01504054

Ռեկտոր ----------Գ.Վարդանյան
(ստորագրություն) Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Ամուր թիկունք » ՍՊԸ
Հասցեն՝ ք.Երևան, Թաիրովի փողոց 10
Բանկը՝ «Ամերիաբանկ» ԲԲԸ
Հ/Հ՝ 1570098222532200
ՀՎՀՀ՝ 01254768

Տնօրեն ----------Վ. Պետրոսյան
(ստորագրություն) Կ.Տ